Հարգելի տիկին Հակոբյան:

Ավարտվող տարին մեր ազգի համար լի էր իրադարձություններով և նվաճումներով կյանքի տարբեր ոլորտներում: Ունեցանք համախմբվելու ու միասնականության զգացմունքի վերապրման բազում առիթներ՝ թե Մայր Հայաստանում և թե Սփյուռքում: Թվում է, առաջին անգամն էր, երբ միասին էինք՝ առանց կոչերի, անմիջական, ընդհանուր մտահոգություններով առլեցուն: Հայաստանի Հանրապետության անկախության քսանամյակի հետ գուցե եւ մեզանում հասունացել է միմյանց զորավիգ լինելու անհրաժեշտությունը:

Առաջ Աստված, այդես էլ շարունակվի:

Շնորհավորում եմ Ձեզ Ամանորի եւ Սուրբ Ծնունդի առիթով, մաղթում նոր նվաճումների ուժ ու եռանդ, ի փառս Հայաստանի եւ հայ ազգի:

Ալեքսանդր Բարսեղյան

«Խաչքար» հայկական մշակութային կենտրոնի տնօրեն

Հայ Առաքելական Եկեղեցու Հարավային Ռուսաստանի Թեմի
Երիտասարդական խորհրդի ատենապետ